ՀՏԴ 941(479.243)

«ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՈՒ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ[37]

Հրայր Փաշայան
ք.գ.թ., դոցենտ
Արցախի Պետական Համալսարան
Լիանա Բալայան
Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոց

Անոտացիա

Հոդվածում վերլուծված է 1998 թվականին միջնորդների կողմից հակամարտող կողմերին ներկայացված և «Ընդհանուր պետություն» հակիրճ անվանումը ստացած «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին» փաստաթուղթը: Միաժամանակ, պատմական զարգացման համատեքստում ցույց է տրվում թե ներկայիս ադրբեջանցիների և նրանց նախնիները հորջորջվող կովկասյան թուրքերի (տարբեր ժամանակներում նրանց տվել են նաև կովկասյան թաթարներ, մուսուլմաններ և այլ անվանումներ) ու հայերի համակեցությունը ինչպիսի դրսևորումներ, հանգրվաններ ու հետևանքներ են ունեցել:

Բանալի բառեր՝ *Ընդհանուր պետություն, հայերի ու կովկասյան թուրքերի համակեցություն, Ղարաբաղյան հակամարտություն, բանակցային գործընթաց:*

1998 թվականի նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Ղարաբաղյան հակամարտության կողմերին ներկայացրին «ոչ կոնվենցիոնալ՝ «Ընդհանուր պետություն» հակիրճ անվանումը ստացած «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին» տարբերակը, որի էությունը կայանում էր նրանում, թե արդյոք հնարավոր է համատեղել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշումը Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ:

Նախքան բուն փաստաթղթի վերլուծությունը անհրաժեշտ ենք համարում որոշակի պատմական էքսկուրս կատարել, պարզաբանելու համար պատմականորեն համակեցության ինչպիսի դրսևորումներ ու հանգրվաններ են ունեցել հայերի և կովկասյան թուրքերի (կովկասյան թաթարներ, մուսուլմաններ, ադրբեջանցիներ) հարաբերությունները:

Հայերի և կովկասյան թուրքերի համակեցությունը պարսկաստանի գերիշխանության շրջանում

[37] Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

Պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում հայերի և կովկասյան թուրքերի համակեցությունն առնչվում է քոչվոր թրքախոս Ջիվանշիր ցեղի Սարուջալլու տոհմի առաջնորդ Փանահի անվան հետ: Վերջինս Իրանի Նադիր շահի կենդանության օրոք նրա մունետիկն էր, այնուհետև նա հեռանում է արքունիքից և աստանդական կյանք վարում Ղարաբաղի դաշտային հատվածներում: Պարսից կառավարությունը մի քանի անգամ փորձել է ձերբակալել Փանահին, բայց հայերի, մասնավորապես Ջրաբերդի մելիք Ալլահ-Ղուլի սուլթանի աջակցությամբ խուսափել է դրանից: Հետագայում Փանահը յուրովի վարձահատույց եղավ բարեկամությանը՝ թույն խառնելով դառնալով իր իսկ հովանավորների գերեզմանափորը [1, էջ 172]:,

18-րդ դարի երկրորդ կեսին, օգտվելով Խամսայի մելիքների միջև ծագած ներքին երկպառակություններից, Վարանդայի Մելիք Շահնազար երկրորդի օգնությամբ վերջինիս հաջողվում է մուտք գործել Արցախ աշխարհի լեռնային հատված, հիմնավորվել Վարանդայում և խարդավանքներ սկսել հայ մելիքների դեմ: Արդյունքում երկրամասում սկիզբ են առնում երկարատև և կործանանար կռիվներ [2, էջ 17]: Լեռն խոսելով այս մասին, նշում է. «Նրանք (խոսքը Խամսայի մելիքությունների մասին է) տեսնում էին, որ միատարր հայ ազգաբնակչության մեջ, որ ծածկում էր Լեռնային Ղարաբաղը, ներս է խուժում օտար, թշնամի ուժ, բերելով իր հետ ստրկություն և դժբախտություն» [3, էջ 499-500]:

Սակայն դրանով հանդերձ Լեռնային Ղարաբաղի հայկական պատկանելիությունը և հայերի սեփական կալվածքների վրա միանձնյա տիրապետությունը որևէ մեկը կասկածի տակ չէր դնում: Դրա մասին է վկայում օրինակ այն խոսուն փաստը, որ Ղարաբաղի խան հռչակված Փանահը իր համար տոհմային գերեզմանատուն ընտրեց ոչ թե նստավայր Շուշին, այլ խաչենի իշխանից գնած Աղդամը [1. էջ 174]:

Փանահի և Իբրահիմի վարած հայակործան քաղաքականությունը բավականին ծանր հետևանքներ ունեցավ արցախահայության համար: Այդուհանդերձ, 18-րդ դարի վերջերին իրենց ինքնիշխանությունը որոշակիորեն պահպանած հայ մելիքներին հաջողվեց ազատագրական պայքարը նոր ուղեծրի մեջ դնել: Նշված իրողությունների համատեքստում, 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում Արցախ-Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին:

Ռուսական կայսրությունը և հայերի ու կովկասյան թաթարների համակեցության դրսևորումները

Հակառակ հայերի սպասումների և Ղարաբաղի մելիքությունների հիմքի վրա հայկական անկախ պետության վերականգնման խոստմանը՝ Ռուսաստանը հայերի և բնիկ մյուս ժողովուրդների համար միանգամայն անսպասելի քաղաքականություն որդեգրեց ողջ տարածաշրջանում: Նախ՝ վերացվեց մելիքական կարգը, ապա խայտաբղետ ժողովրդական կազմ ունեցող տարածաշրջանն իրանի քաղաքական և մշակութային ազդեցությունից ամբողջությամբ կտրելու իր ծրագիրն իրագործելու համար՝ Ռուսական կայսրությունն իրեն հենարան ընտրեց տեղի թուրքերին, որոնք տարածաշրջանում գերիշխելու համար բացահայտ մրցակցում էին պարսիկների հետ: Այնուհետև նրանց տրվեց մահմեդականներ, իսկ ավելի ուշ՝ կովկասյան թաթարներ ընդհանրական անվանումը [4, էջ 13-14]: Ցարական Ռուսաստանն Արևելյան Անդրկովկասի իսլամադավան ժողովուրդներին իրանական մշակութային արմատներից հեռացնելուց հետո հեռանկարում նպատակ ուներ նրանց ռուսաֆիկացնել: Այսպիսինն էր կայսրության քաղաքական ուղեգիծը Հարավային Կովկասում [5]:

Չնայած գործադրած ջանքերին, զարգացող կապիտալիզմը նոր ընթացք տվեց ոչ միայն երկրամասի էթնիկական, այլև սոցիալ-քաղաքական զարգացումներին: Եվրոպայից արդյունաբերական Բաքու սկսեցին թափանցել սոցիալական արդարության ու ազգային հավասարության հեղափոխական գաղափարները: Դրանց կրողներն ու տարածողները հիմնականում հայ բանվորներն էին, որոնք «գլխավորում էին պրոլետարական հիերարխիան» Անդրկովկասում [6, էջ 321-336]: Մի կողմից սոցիալական շարժումների թափը կոտրելու, իսկ մյուս կողմից՝ հավատքով շիա, լեզվով թուրք, ծագումով և գենետիկորեն խառնածին զանգվածին ռուսաֆիկացնելու համար կայսրության հատուկ ծառայությունները 1905-07 թթ. հրահրեցին հայերի ու թաթարների բախումներ և թիկունքից պաշտպանեցին վերջիններին [4, էջ 15]: Ինքնության որոշակիություն չունեցող և անորոշության մեջ գտնվող մահմեդական այդ զանգվածի համար դա լավագույն առիթն էր և տնտեսական դիրքերը բարելավելու և ինքնությունը որոշակիացնելու համար: Հայերի և մյուս կողմից՝ օտխոդնիկներ-մահմեդականներ-կովկասյան թաթարների համակեցությունը Ռուսական կայսրության կազմում կործանարար հանգրվան ունեցավ հայերի համար: Հենց այդ տարիներին Քարվաճառի, Քաշաթաղի (Լաչինի) շրջաններում հրկիզվեցին ու դատարկվեցին բազմաթիվ հայկական բնակավայրեր: Արդյունքում՝ Արցախում հայտնված ինքնակոչ թուրք բեկերը տարբեր միջոցներով ռուս իշխանավորներից իրավունք էին ստանում տեր դառնալու հայկական գյուղերում և ազատորեն կատարում էին ամենայն վայրագություն, կողոպուտ ու թալան [2, էջ 17]: Իր հերթին Ռուսաստանը ամեն միջոց գործադրեց՝ բաժան-բաժան անելու նույնիսկ Արևելահայաստանի տարածքը, այնպես իրարից հեռացնելու նրա առանձին մասերը, որպեսզի ոչնչով չհիշվի նրա ամբողջականությունը [6, էջ 180]:

Անդրկովկասի կոնֆեդերացիան և հայ-թաթարական համակեցության հիմնախնդիրները

Չնայած այս ամենը բացասաբար անդրադարձավ Արցախի և ողջ Արևելյան Անդրկովկասի էթնոժողովրդագրության վրա, այնուամենայնիվ, հայ և օտար աղբյուրների վկայությամբ մինչև 1917 թվականը, որը պատմական նոր շրջանի սկիզբ դարձավ, Լեռնային Ղարաբաղը գերազանցապես բնակեցված էր հայ ազգաբնակչությամբ [7]:

Հայերի, վրացիների և կովկասյան թուրքերի կողմից 1917թ. նոյեմբերին Թիֆլիսում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ, որի շրջանակներում կովկասյան թուրքերի հավակնությունները նոր ձև ու բովանդակություն ստացան, միտված տարածքային ձեռքբերումներին ու յուրացմանը: Դրան մի կողմից նպաստում էր ռուսական զինուժի կովկասյան ռազմաճակատի լքումը, մյուս կողմից՝ տարածաշրջան թուրքական բանակի ներխուժումը: Իրավիճակն ավելի անտանելի էին դարձնում թաթար հրոսակները, որոնք զինված ռուսական զորքերից զավթած զենք-զինամթերքով և ոգևորված կովկասյան ճակատում թուրքերի հաջողություններից, Ղարաբաղի զանազան վայրերում հարձակումներ էին գործում հայ բնակչության վրա, հրահրում հայ-թաթարական արյունալի կռիվներ [2, էջ 33]:

1918թ. ապրիլին թուրքական ճնշման տակ Անդրկովկասյան սեյմը հայտարարում է Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծման մասին: Այն երկար կյանք չունեցավ, բայց ավելի նպաստավոր պայմաններ ստեղծեց թուրքական ծրագրերի հետագա իրականացման համար, որի հանգրվաններից մեկն էլ հանդիսացավ Արևելյան Անդրկովկասում նոր՝ Ադրբեջան անվամբ թուրքական պետության ստեղծումը:

Հայ-թաթարական համակեցության հետևանքները 1918-1920 թթ.

Հայերի և Կովկասյան թաթարների համակեցության նոր ժամանակաշրջան է սկսվում 1918-1920թթ.՝ Անդրկովկասում անկախ պետությունների գոյության ժամանակաշրջանում: Արդեն 1918թ. Բաթումի բանակցություններում մուսավաթականների նվաճողական հավակնությունների արդյունքում առաջին անգամ (այլ տարածքների հետ միասին) բարձրացվեց նաև Արցախ-Ղարաբաղի պատկանելիության հարցը, չնայած նրանք դեռևս չունեին որոշակի տարբերակիչ, որովհետև անցյալ չէին ունեցել, չէին կարող ետ նայել և ազգային վարչական որևէ միավորի փորձ վկայակոչել [8, էջ 5.]: 1918-1920 թթ. կովկասյան թաթարների հետ համակեցությունը ծանր ավարտ ունեցավ ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես այլ երկրամասերի հայերի համար: 1918թ. սեպտեմբերի 15-ին թուրքական կանոնավոր զորքերը եռամսյա կատաղի մարտերից հետո գրավեցին հայերի կողմից պաշտպանվող Բաքուն, տապալեցին օրինական իշխանություն հանդիսացող կոմունան և քաղաքի հայ բնակչության կոտորածից հետո, որին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր, իշխանությունը հանձնեցին Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը: 1918 թ. վերջին թուրքերին փոխարինած անգլիացիները Լեռնային Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակեցին Խոսրով Բեկ Սուլթանովին, որն ամեն ինչ արեց հայերին ենթարկեցնելու համար: Սակայն ձախողվելով, դիմեց վաղուց փորձված թուրքական մեթոդին:

Սուլթանովի ղեկավարությամբ մարտի 23-ին մուսավաթական բանակը կազմակերպեց Շուշիի հայ բնակչության սպանդը: Շուշիի 23 հազար հայ բնակչությունից կոտորածին զոհ գնաց ավելի քան 8000 հայ [9, էջ 416]: Ընդհանուր առմամբ 1918-1920թթ. հայ-թաթարական բախումների ժամանակ ոչնչացվել են 58 գյուղ, անօթևան մնացել 57 հազար բնակիչ, փոշիացել 7 հազար տնտեսություն, զոհվել 25 հազար մարդ, փակվել կամ ոչնչացվել են բոլոր ֆաբրիկաներն ու արհեստանոցները, մշակույթի օջախները, այրվել ու մոխրի վերածվել Հայոց Շուշին [1, էջ 278]:

Խորհրդային Ադրբեջանի կազմավորումը և հայերի ու մուսուլմանների ընդհանուր պետության գաղափարի իրացումը

1920թ. ապրիլին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը մտավ Բաքու, վերացրեց Թուրքիայի կողմից հիմնված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, և հիմնեց նորը՝ Խորհրդային Ադրբեջանը: Հայերի, թալիշների, լեզգիների, թաթերի, ուդիների և այլոց ընդհանուր հայրենիքը հանդիսացող Բաքուն և Արևելյան Անդրկովկասը տարիներ շարունակ կազմակերպված ջարդերի ու տեղահանություններից հետո էլ թուրք-թաթարական դիմագիծ չուներ: Դա էր պատճառը, որ խորհրդային գործիչները այդ թվում Ն. Նարիմանովը հնարավոր չգտան տեղի թուրքերի՝ կովկասյան թաթարների ազգային պետության հիմնումը [9, էջ 99-101]: Ազգային հարցը լուծելու նոր մոդել էր անհրաժեշտ, ի դեմս ինտեռնացիոնալ, արտազգային Ադրբեջանի, որը օրինակ պիտի հանդիսանար ողջ խորհրդային տարածքի համար և նաև հարթակ՝ դեպի Արևելք «կարմիր հեղափոխության» տարածման համար [4, էջ 28-29]:

Այդուհանդերձ՝ Խորհրդային Ադրբեջանի կոմունիստ ղեկավարները Ղարաբաղը նվաճելու հարցում վարում էին նույն քաղաքականությունը ինչ մուսավաթական ադրբեջանը: Չունենալով որևէ լուրջ հիմնավորում Լեռնային Ղարաբաղը Մայր Հայաստանից օտարելու համար, հայերի

ու կովկասյան թաթարների ընդհանուր պետություն ձևավորելու քաղաքական դրդապատճառը ձևակերպվել է 1921թ. հուլիսի 5-ի չընդունված, բայց իրագործված «որոշման» առաջին պարբերությունում. «ելնելով մուսուլմանների ու հայերի ազգային խաղաղության անհրաժեշտությունից» [10, էջ 77-78]: Գործնականում քսանական թվականներին ընդունված բոլոր իրավաքաղաքական փաստաթղթերում առկա են ԱդրԽՍՀ պետական յուրահատկությունը մատնանշող համանման ձևակերպումներ՝ կապված սահմանների ճշտման և քաղաքականության հետ, որոնք հաստատում են ԱդրԽՍՀ-ի անդրազգային, ինտերնացիոնալ բնույթը՝ որպես նոր տիպի հայ-մուսուլմանական պետական կազմավորում (տես՝ օրինակ, «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի կազմավորման մասին» ԱդրԿԳԿ-ի 1923թ. հուլիսի 7-ի դեկրետը, - Հ. Փ.) [11, էջ 71-74]: Մասնավորապես հարկ է ընդգծել, որ ԽՍՀՄ իրավական տիրույթում ԼՂԻՄ-ը և ԱդրԽՍՀ-ն պետականության հիմնական հատկանիշներով առավելագույնս մերձեցված կարգավիճակներով կազմավորումներ են եղել [11, էջ 76-77]:

Այնուամենայնիվ ԱդրԽՍՀ ղեկավարությանը խորհրդային համակարգը հնարավորություն է ընձեռել ձեռնարկել քայլեր, որոնք միտված էին Լեռնային Ղարաբաղի հայաթափմանն ու որպես պետաիրավական կառույցի վերացմանը, որը յուրօրինակ ձևով հանդիսանում էր նաև ադրբեջանահայության իրավունքների երաշխավորը [12, էջ էջ 91-95]: Իր այդպիսի կարգավիճակով մարզը «արգելք էր դարձել» մյուս ազգերին ձուլելու և նոր՝ «ադրբեջանական» ազգի ստեղծման ԱդրԽՍՀ ղեկավարության ծրագրերի իրականացման ճանապարհին, որի մասին հենց իրենք են բազմիցս արտահայտվել [13]: Արդեն 1988թ. հուլիսի 13-ին ԱդրԽՍՀ ԳԽ նախագահությունը, քննարկելով ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների 20-րդ արտահերթ նստաշրջանի որոշումը մարզը ԱդրԽՍՀ-ից ՀԽՍՀ-ի կազմ փոխադրելու մասին հարցը, որոշեց «…անընդունելի համարել, քանի որ նրա իրագործումը հակասում է հանրապետության ադրբեջանցի և հայ ազգաբնակչության շահերին» [14]: Եվ արդեն, դարասկզբի մուսուլմանները դարավերջին ներկայացվեցին որպես ադրբեջանցիներ:

ԼՂԻՄ-ի հայաթափման և էթնիկ զտումների ուղղությամբ իրականացրած նպատակաուղղված քաղաքականության վերաբերյալ նույնպես բազմաթիվ փաստեր և փաստարկներ գոյություն ունեն [15]: Այդ քաղաքականության մասին ևս հենց իրենք՝ ադրբեջանական ղեկավարներն են բազմիցս վկայել [16]: Արդյունքում՝ 1923-1989 թթ. (66 տարվա ընթացքում) ինքնավար մարզի հայ բնակչության թիվը 149,6 հազարից դարձել է 145,5 հազար, այն դեպքում, երբ արհեստականորեն ստեղծված էթնոսի՝ ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում 7,7 հազարից հասել է 40,6 հազարի [15, էջ 14]:

Ուշացած, բայց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերացնելու մտադրությունը պաշտոնական Բաքուն իրագործեց 1991թ. նոյեմբերի 26-ի՝ Ադրբեջանի Հանրապետության գերագույն խորհրդի որոշմամբ: Ինչպես այս այնպես էլ առաջադրված մյուս նպատակները գործնականում իրագործելու համար Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը պատերազմ սանձազերծեց «սեփական քաղաքացիներին» բնաջնջելու համար:

Ղարաբաղյան հակամարտությունը և հայերի ու ադրբեջանցիների ընդհանուր պետության գաղափարի վերջնահանգրվանը

Եվ այսպես, 1998-ին միջնորդները հակամարտող կողմերին ներկայացրին «ընդհանուր պետություն» անվանումը ստացած «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին» տարբերակը: Այն բաղկացած էր

«Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին», «Լաչինի մասին», «Շուշի և Շահումյան քաղաքների մասին», «համաձայնություն զինված հակամարտության դադարեցման մասին», «երաշխիքների մասին» բաժիններից ու հավելվածներից [17]:

1. Լեռնային Ղարաբաղի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանն ուղղված դիրքորոշման մեջ նախագիծն ընդունելով որպես բանակցությունների հիմք, պաշտոնական Ստեփանակերտը ներկայացրել է մի շարք մտահոգություններ ու վերապահումներ, որոնք վերաբերում են ընդունված որոշումների իրագործման երաշխիքներին, ԼՂՀ կարգավիճակի երկկողմ և բազմակողմ երաշխիքների մշակմանը, հետհակամարտային վերականգնման, ԼՂՀ անվտանգությանը, տարածքային-պետական սահմաններին վերաբերող հարցերին[**], ինչպես նաև Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդների միջև թշնամական գործողությունների դադարեցման և խաղաղության կնքման մասին խնդիրներին [18]:

2. Եթե համեմատենք 1997թ. փաթեթային և փուլային տարբերակների հետ, ապա նկատելի է, որ փաստաթուղթը որոշակիորեն տարբերվում է նրանցից: Մասնավորապես, եթե նախորդիվ հետևանքների վերացումն էր ներկայացվում որպես կարգավորման առաջնահերթություն, ապա այժմ առաջին պլան էր մղված Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը՝ նրա շուրջ սկզբունքային համաձայնության ձեռք բերումը հակամարտող կողմերի միջև: «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին համաձայնագրի» ներքո սահմանված էր, որ *Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում, և Ադրբեջանի հետ միասին կազմավորում է «ընդհանուր պետություն» վերջինիս միջազգայնորեն ճանաչված սահմաններում* (անկախացումից ի վեր իրավական և փաստացի առումներով նման տարածք գոյություն չունի, - Հ. Փ.): Ինչպես ավելի ուշ նկատել է նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը՝ «ընդհանուր պետության» վերաբերյալ փաստաթուղթը ընդունելի չէր հայկական կողմի համար: Սակայն, մեծ հաշվով, դա ևս մեկ կարևորագույն քայլ էր՝ լիսաբոնյան ընկալումները և միջազգային հանրության կողմից տարածքային ամբողջականության գերակայության վերաբերյալ կարծրատիպը վերացնելու ճանապարհին [19]:

3. «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին» համաձայնագրի առաջին կետը վերաբերում է սեփական սահմանադրության ընդունմանը և համապատասխան փոփոխությունների կատարմանը Ադրբեջանի սահմանադրության մեջ: Ընդ որում կարևոր է, որ այս հարցում որոշակի դերակատարություն է վերապահված Հայաստանի Հանրապետությանը, քանի որ *ապագայում նախատեսվող փոփոխությունները պետք է կատարվեն երեք կողմերի համաձայնությամբ:* Այսինքն՝ դրանով ավելի մեծ ուշադրություն է հատկացվել իշխանության տարանջատման կամ բաժանման, ըստ այդմ՝ նվազ կամ հավասար իշխանության միջոցով բարեկեցության, ինքնության ապահովման մեխանիզմներին, որը ոչ միայն նրա զարգացման և պետականանման միավորի զգացողություն ապահովելու միտում ուներ, այլև՝ նրա կողմից իսկ սրված ընկալման նվազեցման երաշխիք և որպես թույլ կողմ, արտաքին հարաբերությունների գերկարևորումը բավարարող միջոց [20, էջ 92-93]:

4. Փաստաթղթում անընդունելի և երկակի են ձևակերպված ԼՂ-ի սահմանների և արտաքին կապի ապահովման դրույթները: Ըստ այդմ՝ *Լեռնային Ղարաբաղի սահմանները*

[**] Հաշվի առնելով, որ փաստաթղթի հրապարակումից հետո պաշտոնական Ստեփանակերտի ներկայացրած դիրքորոշման մեջ արձանագրված են մի շարք առարկություններ, չկրկնվելու համար վերլուծությունն առավելապես կկրի խորքային բնույթ:

կհամապատասխանեն նախկին ԼՂԻՄ սահմաններին, իսկ դրանց հնարավոր ճշտումները կամ փոփոխությունները կարող են լինել Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հատուկ փոխադարձ պայմանավորվածությունների առարկա: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապին, «Լաչինի միջանցքի մասին» բաժնի համաձայն՝ *ԼՂ կողմից այդ միջանցքը ՀՀ հետ անարգել հաղորդակցության նպատակով օգտագործելու հարցը հռչակում էր առանձին պայմանավորվածությունների առարկա, եթե Ադրբեջանի ու ԼՂ համաձայնությամբ այլ որոշումներ չընդունվեն շրջանի հատուկ պայմանակարգի վերաբերյալ, իսկ ողջ շրջանը մշտապես պետք է մնա որպես լիովին ապառազմականացված գոտի:* Բնականաբար նշվածը ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլև նման կարևոր հարցերի լուծումը չպետք է կախման մեջ դնել Ադրբեջանի բարի կամքից ու ցանկությունից, որը ինչպես պատմական փորձն է վկայում, երբեք չի դրսևորվել:

5. Իսկ ահա 5-րդ կետով, ինչպես նախորդ տարբերակներում, նորից երկրամասը հայաթափելու հիմք էր ստեղծվում: Դրանով սահմանվում էր, որ *«Լեռնային Ղարաբաղի հայկական ծագում ունեցող քաղաքացիները կարող են արտագաղթել Հայաստան և մշտական բնակություն հաստատելու համար այնտեղ տեղափոխվելու դեպքում հայկական քաղաքացիություն ստանալ այդ երկրի օրենքներին համաձայն»:* Այս կետը հատկապես անընդունելի է այն պատճառով, քանի որ Ադրբեջանական պետությունը հիմնվել է Թուրքիայի կողմից և համարվում է Հարավային կովասում թուրքական ծրագրերի իրականացնողը, հետևաբար առաջին մի քանի տարիներին գառան մուշտակ հագնելով, թուրքը վերջ ի վերջո ցույց է տալու իր իրական դեմքը: Հայերիս պատմական հիշողությունը և դառը փորձը ստիպելու է ԼՂ-ում բնակվող հայ բանկչությանը անհեռանկարային համարել այստեղ ապրելը ու օր առաջ լքել սեփական բայց վտանգավոր հայրենիքը:

6. Հատկանշական է «Զինված հակամարտության դադարեցման մասին» համաձայնագրի 5-րդ կետում փախստականներին և տեղահանված անձանց նախկին մշտական բնակության վայր կամավոր վերադարձին առնչվող կետը: Մասնավորապես նշվում է, որ *Կողմերը բանացություններ են վարում, իրագործելու նաև անվտանգ և կամավոր վերադարձը բոլոր այն անձանց, ովքեր բացի սույն համաձայնագրի ընդգրկվածներից, նույնպես հանդիսանում են փախստականներ, կամ տեղահանվել են հակամարտության և Հայաստանի ու Ադրբեջանի միջև 1987 թվականից հետո ստեղծված լարվածությունից հետո:* Ինչպես նախորդիվ այս դեպքում ևս այս կարևորագույն հացը թողնված է կողմերի բարի կամքին և այդպես էլ հստակություն մտցված չէ: Օինակ անհասկանալի է, թե ինչպես պետք է ադրբեջանահայությունը վերադառնա Բաքու կամ Սումգայիթ և հատկապես ով պետք ապահովի նրանց անվտանգությունը:

Հանրության շրջանակներում «ընդհանուր պետություն» շուրջ լուրջ բանավեճ չծավալվեց, քանի որ փաստաթուղթը հրապարակվեց միայն 2001թ., երբ արդեն Երևանն ու Բաքուն բանակցում էին փարիզյան և քիվեսթյան սկզբունքների շուրջ: Մյուս կողմից՝ մամուլում հայտնված կցկտուր տեղեկատվությունը բավարար չէր բանավեճ ծավալելու համար: ՀՀ գործող իշխանությունները փաստաթուղթն ընդունելով որպես բանակցությունների հիմք փորձում էին հիմնավորել, որ «Ընդհանուր պետությունը» մի քայլ առաջ է նախկին առաջարկություններից, իսկ նախկին իշխանությունները պնդում էին, որ, այն ինչ առաջարկվել է, նախկին տարբերակների կրկնությունն է: Ավելին՝ «Ընդհանուր պետությունը» նշանակում է ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը պնդում էր, որ կարգավորման այսպիսի փաստաթուղթ երբևէ չի առաջարկվել: «Միշտ եղել է շատ հստակ ձևակերպում՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականություն և Ղարաբաղն ինքնավարության

կարգավիճակով Ադրբեջանի կազմում: «Ընդհանուր պետության» գաղափարն էապես տարբերվում է: Դա չի նշանակում, որ Ղարաբաղը Ադրբեջանի ինչ-որ մասն է կազմում, այլ Ադրբեջանը և Ղարաբաղը պայմանավորվում են ապրել ինչ-որ սահմաններում, բայց ինքնուրույն սկզբունքներով: Եթե ծանոթանաք Ադրբեջանի պատասխանին, ապա կտեսնեք, որ նրանց չի բավարարում հենց այդ հանգամանքը: Խոսքը առանձին ապրելու հնարավորության մասին է» [21]:

Փաստաթուղթն անընդունելի համարվեց և հապճեպորեն մերժվեց Ադրբեջանի Հանրապետության կողմից՝ այդպես էլ չդառնալով բանակցությունների հիմք: ԱՀ-ի նախագահի խորհրդական Վ. Գուլիզադեն և ԱՀ արտգործնախարար Թ. Զուլֆիղարովը մեկնաբանելով Բաքվի մերժման պատճառները, նշում էին, որ Ադրբեջանական կողմը ցանկանում է խուսափել միութենական պետության երկիմաստ հայեցակարգից [22, էջ 223]: Ըստ էության պաշտոնական Բաքուն դեմ արտահայտվեց Ադրբեջանի ու ԼՂ-ի միջև հորիզոնական հարաբերություններին՝ հօգուտ ուղղահայաց հարաբերությունների՝ նշելով, որ հայկական անկլավին կարող է տալ միայն «ինքնավարության բարձր աստիճան» [23, էջ 794]: Ալիևի խոսքերով՝ «Ընդհանուր պետությունը» նշանակում էր Լեռնային Ղարաբաղին փաստացի անկախության տրամադրում. «Ադրբեջանում մի ասացվածք կա՝ սա ավելի սև է քան սևը: Համեմատած նախկին առաջարկների հետ ընդհանուր պետությունն» ավելի վնասաբեր էր: Հենց որ ծանոթացա ասացի, որ անգամ չենք ուզում քննարկել: Դուք մեզ դնում եք մի իրավիճակում, երբ Ադրբեջանի տարածքում լինում են երկու պետություններ՝ Ադրբեջան և Լեռնային Ղարաբաղ, և Ադրբեջանն իրավունք չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ես ասացի՝ Դուք մտածում եք թե մենք այնքան հիմար ենք, որ չենք հասկանում: Մենք մերժեցինք, բայց Հայաստանն ընդունեց և մինչև հիմա ամենուր ասում է, որ եթե Ադրբեջանն ընդունած լիներ, խաղաղությունը հաստատված և հակամարտությունը կարգավորված կլիներ՝ անշուշտ իրենց օգտին… Այդ առաջարկությունները մեծ սադրանք էր Ադրբեջանի դեմ» [24]:

Այսպիսով, այն բանից հետո, երբ զանգվածային բռնություններով ու ջարդերով հայերը հանվեցին գրեթե ողջ հանրապետությունից, ԱդրԽՍՀ-ը որպես հայերի ու մահմեդականների (որոնք 1988թ. արդեն ներկայացվում են որպես ադրբեջանցիներ) ընդհանուր պետություն հիմնելու՝ 20-ական թվականներից եկող գաղափարի փոխարեն, պաշտոնական Բաքուն սկսեց խոսել միայն մարզի հայ և ադրբեջանցի (երկու համայնքների) շահերի մասին՝այլևս չտալով ինտերնացիոնալ, ոչ ազգային Ադրբեջանի անունը: 1998թ. Մինսկի խումբը, այնուամենայնիվ, Բաքվին հիշեցրեց այդ մասին՝ «ընդհանուր պետություն»-ը առաջարկելով որպես հակամարտության լուծման ելք: Ողջ Արևելյան Անդրկովկասում հայերի ցեղասպանությունն ավարտած Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը կտրականապես մերժեց այն [4, էջ 79-80]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., 2002:
2. Աղաբաբյան Ա., Ղարիբյան Ա., Արցախ. Եր. 2014:
3. Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Եր. 1946:
4. Մանասյան Ա., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել, Եր. 2011:
5. Свентоховский Тадеуш. Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане // Азербайджан и Россия: общества и государства. М., 2001:

6. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994:
7. Տես՝ 1. Кавказский календарь на 1917, Тифлис 1916, ст. 190, 191, 194, 195. 2. К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинции Армении, том 1, Ер., 1991, ст. 41.
8. Сысоев В. М., Краткий очерк истори Азербайджана, Баку, 1925.
9. «К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР: документы и материалы»: Баку, 1989.
10. РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 1. л. 124. Заверенная копия; Опубл. в журн. «Вестник архивов Армении», 1989г, № 2, д. 14, ст. 77-78.
11. Տես՝ Փաշայան Հ., Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, Ստեփանակերտ, 2016:
12. Այս մասին մանրամասն տես՝ Փաշայան Հ., ԼՂՀ-ն որպես Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) իրավունքների երաշխավոր, (Արցախի Պետական Համալսարանի գիտական տեղեկագիր), Ստեփանակերտ, 2010, թիվ 1 (21):
13. Այս առթիվ բնութագրական է Ադրբեջանի Հանրապետության նախկին նախագահ Հ. Ալիևի խոսքը: «1923 թվականին Լեռնային Ղարաբաղին ինքնավարության տրամադրումը Ադրբեջանի համար պատուհաս է դարձել, իմացեք դա: Ճիշտ է, այդ ժամանակ նրան ցանկանում էին տալ Հայաստանին: Ադրբեջանի ղեկավարները ձգտել են, և վերջապես հասել են նրան, որ այն մնա Ադրբեջանի Կազմում: Պետք է մնար, բայց ոչ ինքնավարության տեսքով»: Տես՝ Գազ. «Бакинский рабочий», Баку, 12.11.1999г.
14. Տես՝ газета “Бакинский рабочий”, 14 июня 1988г.
15. Տես՝ Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա. և այլոք, Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Եր., 2007:
16. Տես՝ Գազ. «Бакинский рабочий», Баку, 24.01.2001г, Գազ. «Зеркало», Баку, 23.07.2003г.
17. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով ներկայացված և «ընդհանուր պետություն» անվանումը ստացած տարբերակը տես՝ www.hzh.am/LXH-Himnaharc/Yndhanur%20petutiun.html
18. Տես՝ http://theanalyticon.com/?p=7886
19. Տես՝ Օսկանյան Վ., «Ընդհանուր պետության» գաղափարի ծնունդը, https://mediamax.am/am/column/12217/
20. Հայաստանը փոխակերպվող աշխարհում /Ս. Սաֆարյան, Հակամարտությունների սիմետրիկ և ասիմետրիկ լուծումներ, Եր., 2006:
21. Ռ. Քոչարյանի զրույցը Հ1, Ար և Ա1+ հեռուստաընկերությունների հետ, 30 նոյեմբեր, 1998թ.:
22. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում, ՔՀԻ, Եր., 2009:
23. Տես՝ www.idpprojekt.org/Sites/idpprojektDb/idpSurvey.nsf/wViewCountries/5E605D99Co593599C1256A09003450C8?OpenDocument, մեջբերումն ըստ՝ Հայաստանը փոխակերպվող աշխարհում /Ս. Սաֆարյան, Հակամարտությունների սիմետրիկ և ասիմետրիկ լուծումներ, Եր., 2006:
24. Խորհրդարանում Հ. Ալիևի ելույթից, 2001թ. փետրվարի 23, www. Groong. Com

РЕЗЮМЕ

"Общее государство" в контексте карабахского противостояния и идеи сосуществования армян и кавказских турок

Грайр Пашаян, Лиана Балаян

Ключевые слова: Общее государство, сосуществование армян и кавказских турок, Карабахское противостояние, процесс урегулирования.

В статье проанализирован документ "О принципах всеохватывающего урегулирования вооруженного противостояния Нагорного Карабаха", представленный посредниками конфликтующим сторонам и получивший название "Общее государство". Одновременно, в контексте исторического развития показывается какие проявления, пристанища и последствия имело сосуществование нынешних азербайджанцев и их предков, именуемых кавказскими турками (в разные времена их называли также кавказскими татарами, мусульманами и другими разными названиями) и армян.

SUMMARY

“Common State” in the Context of the Karabakh Confrontation and the Idea of the Coexistence of Armenians and Caucasian Turks

Hrayr Pashayan, Liana Balayan

Keywords: Common State, the coexistence of Armenians and Caucasian Turks, the Karabakh confrontation, the settlement process.

The article analyzes the document “On the principles of comprehensive settlement of the armed confrontation of Nagorno-Karabakh” presented by the mediators to the conflicting parties and called the “Common State”. At the same time, in the context of historical development, it shows what manifestations, shelters and consequences had the coexistence of current Azerbaijanis and their ancestors, called Caucasian Turks (at different times they were also called Caucasian Tatars, Muslims and other different names) and Armenians.